ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 36-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը.

1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2025թ. մայիսի 16-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2) Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 08-ի N 24-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3) Թումանյան համայնքի Դսեղ գյուղի 06-035-0109-0084 ծածկագրի 0.102251 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին
4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Շամուտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-085-0187-0001 ծածկագրի 0.94504 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին
5) Թումանյանի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների արխիվի արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման և օգտագործման կարգը հաստատելու մասին
6) Թումանյան համայնքի էթիկայի և վարքի հանձնաժողովի կազմը հաստատելու մասին
7) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու,դրանց անհատական կազմը հաստատելու մասին
8) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին
9) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին
10) <<ԵՎՐՈԱՍՖԱԼՏ>>ՓԲԸ-ի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ 13.04.2025թ. կնքված <<ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/2Շ>> ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում իրականացվող Հ-22 /Մ-6/-Դսեղ/Հ-70/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 8+000 կմ 13+900 հատվածի հիմանանորոգման աշխատանքների մասին
11) Թումանյան համայնքի Դսեղ գյուղի 06-035-0135-0071 ծածկագրի 0.36455 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին
12) Օրինական ճանաչված անասնաշենքը,կացարանը,ծածկարանը և դրա սպասարկման ու պահպանման համար օգտագործվող տարածքն ուղղակի վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին
13) Թումանյան համայնքի Դսեղ գյուղի 06-035-0108-0099 ծածկագրի 0.96258 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին
14) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշելու մասին

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 37-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 08-Ի N 24-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով ,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշումը և Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 08-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՐԱԿՏՈՐԻ,ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՍՊԱՆԴԱՆՈՑԻ, ԽՈՏԱՄԱՄԼԻՉԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> N 24-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) Որոշման 3-րդ կետի նախադասությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ՝ << Լիզինգի առարկայի արժեքը կազմում է տրակտորի համար 17,000,000 (տասնյոթ միլիոն) ՀՀ դրամ, մոդուլային սպանդանոցի համար՝ 19,500,000 (տասնինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, խոտամամլիչի համար 4,500,000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ոռոգման համակարգի համար՝ 16,500,000 (տասնվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, լիզինգի առարկայի ընդհանուր արժեքը կազմում է 57,500,000 (հիսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից կանխավճարի գումարը կազմում է 11,500,000 (տասմեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ>>:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 38-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ 06-035-0109-0084 ԾԱԾԿԱԳՐԻ 0.102251 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 18032025-06-0048 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-035-0109-0084 ծածկագրում գտնվող 0,102251 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 135000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-085-0187-0001 ԾԱԾԿԱԳՐԻ 0.94504 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 11022025-06-0047 վկայականը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Շամուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-085-0187-0001 ծածկագրի 0.94504 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:
2.Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկային վճարը՝20000 (քսան հազար) ՀՀ դրամ,նախավճարի չափը մեկնարկային վճարի 5%,քայլի չափը՝մեկնարկային վճարի 5%-ի չափով:
3.Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 40-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք 6-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյանի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների արխիվի արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման և օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 16-ի թիվ 40-Ա որոշման

ԿԱՐԳ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Թումանյանի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների արխիվի արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման, օգտագործման և արխիվացման կարգը:

2.Թումանյանի համայնքապետարանում և ենթակա կազմակերպություններում պահպանվում են համայնքապետարանի ներքին և արտաքին գործունեության հետ կապված իրավական և ոչ իրավական բնույթ ունեցող փաստաթղթերը (սույն կարգում կիրառվող իմաստով այսուհետ՝ փաստաթղթերը):

3. Փաստաթղթերի ժամանակավոր (մինչև պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելը) պահպանելու առավելագույն ժամկետներն են՝ տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների փաստաթղթերի համար՝ 5 տարի:

4. Փաստաթղթերի հաշվառման, պահպանման, օգտագործման և արխիվացման նպատակով պետք է կազմվի փաստաթղթերի ցուցակ՝ նշելով փաստաթղթի հերթական համարը, փաստաթղթի անվանումը, փաստաթղթի թերթերի քանակը, որն ամրակարվում է փաստաթղթերի առաջնամասում, որից հետո փաստաթղթերը տեղադրվում են թղթապանակի մեջ (այսուհետ՝ փաստաթղթային գործ): Յուրաքանչյուր թղթապանակի մեջ կարելի է տեղադրել մեկից մինչև մի քանի փաստաթղթային գործեր: Փաստաթղթային գործերը ընդունման-հանձնման ակտով հանձնվում են փաստաթղթերի արխիվացման համար պատասխանատու անձին:

5. Փաստաթղթերը պահպանվում են դրանց համար նախատեսված սենյակում կամ սենյակի առանձին հատվածում՝ պահպանելով հակահրդեհային կանոնները: Թղթապանակները դասավորվում են դարակների վրա՝ ըստ իրենց համարների: Յուրաքանչյուր դարակաբաժնի վրա գրվում են այդտեղ տեղադրված՝ գրանցված կամ հաշվառված, համարները կամ այդ համարների միջակայքը:

6. Փաստաթղթերի պահպանման սույն կարգի ընդհանուր պահանջները պահպանելու համար պատասխանատու է համապատասխան մասնագետը, իսկ փաստաթղթերի ամբողջականության, սույն կարգով սահմանված կարգով պահպանման, օգտագործման և արխիվացման համար պատասխանատու է համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրով նման պարտականություններ ունեցող աշխատողը (այսուհետ՝ պատասխանատու աշխատողը):

7. Պահպանված փաստաթղթերի օգտագործման անհրաժեշտություն առաջանալու դեպքում, կատարողը պատասխանատու աշխատողից ստանում է փաստաթղթային գործը, կատարում ընթացիկ գործողություններ և եթե փոփոխություններ են կատարվել, ապա նույն կարգով կազմում է լրացուցիչ գործ, որը դրվում է նախկին գործի հետ և հանձնվում պատասխանատու աշխատողին, իսկ եթե փոփոխություններ չի կատարվել՝ նախկին գործը վերադարձվում է պատասխանատու աշխատողին:Վերջինս ստուգում է գործի ամբողջականությունը և տեղադրում տվյալ գործի համար նախատեսված տեղում:

8. Համայնքային արխիվում գործերը մինչև մշտական պահպանության հանձնելը պահպանվում են՝
8.1. հավերժ ՝ մշակութային, պատմական արժեք ունեցող փաստաթղթերը
8.2. երկարաժամկետ՝ մինչեւ 50 տարի՝ աշխատանքային գործունեության փաստաթղթերը՝ աշխատանքի ընդունման, ազատման հրամանները, աշխատանքային պայմանագրերը, աշխատավարձի ցուցակները:
8.3. մինչեւ 20 տարի՝ փորձարարակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների արդյունքներ պարունակող փաստաթղթերը, քաղաքաշինական փաստաթղթերը:
8.4. մինչեւ 10 տարի՝ հաշվապահական փաստաթղթերը, իրավական ակտերը, գործավարական փաստաթղթերը, արխիվային փաստաթղթերի բնօրինակի իրավունքով պատճենները:
8.5. մինչեւ 5 տարի էլեկտրոնային և հեռաչափական փաստաթղթերը, ձեռագրերը, նկարները, գծագրերը, նամակագրությունը, օրագրությունը, հուշագրությունը:

9.Վերը նշված ժամկետների ավարտից հետո փաստաթղթերը, սահմանված կարգով հանձնվում են մշտական պահպանության պետական արխիվ:

10. Թղթային եղանակով ներկայացված բոլոր գործերի փաստաթղթերը թվայնացվում է և պահպանվում համայնքապետարանի բազային ցանցում:

11. Էլեկտրոնային եղանակով գրանցում ստացած փաստաթղթերը պահվում են համայնքապետարանի բազային ցանցում, էլեկտրոնային կրիչների վրա 10 տարի ժամկետով, որից հետո սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հանձնվում են պետական արխիվ:

12. Էլեկտրոնային եղանակով գրանցում ստացած փաստաթղթերը միաժամանակ արտատպվում են և թղթային եղանակով սույն կարգի 3-ից 10-րդ կետերով սահմանված կարգով պահպանվում համայնքապետարանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 41-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ մասով, <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունիսի 7-ի <<Թումանյան համայնքի էթիկայի և վարքի կանոնները սահմանելու մասին>> թիվ 45-Ա որոշումը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի էթիկայի և վարքի հանձնաժողովի կազմը.

1/ Հանձնաժողովի նախագահ-Սուրեն Վաչագանի Թումանյան՝ Թումանյան համայնքի ղեկավար,
2/ ----------//------- քարտուղար- Ռուզաննա Շահվերդյան՝Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,
3/ ----------//------- անդամ- Ռոման Շաքարյան՝ Թումանյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
4/----------//------- --//-- - Փաշիկ Խառատյան՝ Թումանյան համայնքի ավագանու անդամ,
5/----------//------- --//-- -Կարո Ղազարյան՝ Թումանյան համայնքի ավագանու անդամ,
6/----------//------- --//-- -Գառնիկ Հովսեփյան՝ Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի վարչական ղեկավար,
7/----------//------- --//-- - Արման Մաթևոսյան՝ Թումանյան համայնքի Ահնիձոր բնակավայրի վարչական ղեկավար,
8/----------//------- --//-- - Արմեն Զոփուրյան՝ Թումանյան համայնքի ղեկավարի խորհրդական,
9/----------//------- --//-- - Սյուզաննա Խառատյան՝ Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ:
2. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 07.10.2022թ. թիվ 81-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 42-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, համաձայն Թումանյան համայնքի ավագանու կանոնակարգի VII գլխի 93-րդ կետի և հաշվի առնելով Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Ստեղծել Թումանյան համայնքի ավագանու մշտական գործող հետևյալ հանձնաժողովները և հաստատել դրանց անհատական կազմը՝

1) Զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, միջնաժամկետ ծախսերի ծրագրի, տարեկան աշխատանքային պլանի, համայնքի գույքի կառավարման տարեկան ծրագրի, բյուջեի, վարկերի, փոխառությունների, տեղական հարկերի, տուրքերի, վճարների, առևտրի, սպասարկման և այլ ֆինանսատնտեսական հարցերով).
ա .Դավիթ Վանյան
բ. Նարեկ Հովհաննիսյան
գ. Նիկալ Դալլաքյան
դ. Արամայիս Աղաբեկյան
ե. Արեն Աղաջանյան

2) Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է ճարտարապետության, քաղաքային և գյուղական բնակավայրերի քաղաքաշինության, հողային ֆոնդի օգտագործման և պահպանման, ընդերքօգտագործման, գյուղատնտեսության, գովազդի, բնակարանային ֆոնդի և այլ անշարժ գույքին վերաբերվող հարցերով).
ա. Արամ Քոչարյան
բ. Արսեն Մաղաքյան
գ. Գոհարիկ Խաչիկյան
դ. Ռաֆիկ Մարուքյան
ե. Նիկալ Դալլաքյան

3) Կրթության, մշակույթի, սպորտի, սոցիալական և այլ հարակից հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է մշակույթի, կրթության, զբոսաշրջության, երիտասարդության, սպորտի, առողջապահության, շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական, մայրության և մանկության, հաշմանդամության, աշխատանքի, զբաղվածության, հասարակայնության հետ և արտաքին կապերի հարցերով).
ա.Կարո Ղազարյան
բ. Փաշիկ Խառատյան
գ. Սվետլանա Եգանյան

դ.Գոհարիկ Խաչիկյան
ե.Հրանտ Սարգսյան

4) Համայնքային կազմակերպություններին և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, համայնքային հիմնարկներին առնչվող, ճանապարհաշինության, էներգետիկ, ջրային, կապի և այլ հաղորդակցությունների, կոմունալ տնտեսության հարցերով).
ա.Նարեկ Հովհաննիսյան
բ. Արեն Աղաջանյան
գ. Սվետլանա Եգանյան
դ.Դավիթ Վանյան
ե.Կարո Ղազարյան

2. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 15.04.2022թ. N 30-Ա որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 43-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Թումանյան համայնքի Շամուտ գյուղի 06-085-0159-0001 ծածկագրում գտնվող անշարժ գույքը՝ 0,3443 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրաբերության կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:
2.Համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կնքել նվիրաբերության պայմանագիր:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 22.03.2024թ. թիվ 29-Ա որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 44-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Թումանյան համայնքի Շամուտ գյուղի 06-085-0159-0002 ծածկագրում գտնվող անշարժ գույքը՝ 0,26 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրաբերության կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:

2.Համայնքի ղեկավարին՝սահմանված կարգով կնքել նվիրաբերության պայմանագիր:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 29.05.2024թ. թիվ 51-Ա որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 45-Ա

<<ԵՎՐՈԱՍՖԱԼՏ>> ՓԲԸ-Ի ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ 13.04.2025Թ.ԿՆՔՎԱԾ <<ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/2Շ>>ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ Հ-22/Մ-6/-ԴՍԵՂ-/Հ-70/ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՄ 8+000-ԿՄ 13+900 ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ>>

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի պահանջով և հաշվի առնելով <<ԵՎՐՈԱՍՖԱԼՏ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 14.05.2025թ. թիվ 041/25 գրությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Հ-22/Մ-6/-Դսեղ-/Հ-70/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ2+500 հատվածում գտնվող գրունտը որպես հանույթ օգտագործելու և ճանապարհի լիցքեր իրականացնելու,ինչպես նաև տվյալ հատվածի ռելեֆը հետագայում վերականգնելու համար:
2. Հ-22/Մ-6/-Դսեղ-/Հ-70/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ2+500 հատվածում գտնվող գրունտը որպես հանույթ օգտագործելու համար համայնքի բյուջե վճարել 1 խմ՝ 100 ՀՀ դրամ:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Թումանյան համայնքի ղեկավարի խորհրդական Արմեն Զոփուրյանի վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 46-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ 06-035-0135-0071 ԾԱԾԿԱԳՐԻ 0.36455 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 24022025-06-0047 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-035-0135-0071 ծածկագրում գտնվող 0,36455 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 518000 (հինգ հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9	Դեմ -1	Ձեռնպահ -1
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ	ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ	ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ		
ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ		
ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ		
ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ		
ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ		
ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ		
ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 47-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ,ԿԱՑԱՐԱՆԸ,ԾԱԾԿԱՐԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>>թիվ 912-Ն որոշման պահանջներով,հաշվի առնելով,որ Գայանե Լիպարիտի Առաքելյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը և սեփականության իրավունքի N 14042025-06-0021 վկայականը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել Թումանյան համայնքին սեփականության հանդիսացող ՀՀ,Լոռու մարզ, Թումանյան համայնք,գ.Դսեղ, թիվ 26/1 հասցեում գտնվող 653,5 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 513,55 քմ/, 136.25 քմ արտաքին մակերեսով կացարանը /ներքին մակերեսը՝ 118.5 քմ/, և 41,4 քմ արտաքին մակերեսով ծածկարանը /ներքին մակերեսը՝ 39,60 քմ/ և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.233525 հա հողատարածքը (ծածկագիր՝ 06-035-0142-0079) ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Գայանե Լիպարիտի Առաքելյանին:
1) Անասնաշենքի ուղղակի վաճառքի գինը կազմում է 485550.5 (չորս հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր հիսուն դրամ հինգ լումա) ՀՀ դրամ,
2) կացարանի ուղղակի վաճառքի գինը կազմում է 101233.75 (հարյուր մեկ հազար երկու հարյուր երեսուներեք դրամ յոթանասունհինգ լումա) ՀՀ դրամ,
3) ծածկարանի ուղղակի վաճառքի գինը կազմում է 30760.2 (երեսուն հազար յոթ հարյուր վաթսուն դրամ երկու լումա) ՀՀ դրամ,
4) հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 786045.15 (յոթ հարյուր ութսունվեց հազար քառասունհինգ դրամ տասնհինգ լումա) ՀՀ դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 48-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ 06-035-0108-0099 ԾԱԾԿԱԳՐԻ 0.96258 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 20112024-06-0049 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-035-0108-0099 ծածկագրում գտնվող 0,96258 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 1258000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ
ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ
ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ
ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ
ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 49-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի նիստի օրը որոշել 2025 թվականի հունիսի 20-ը, ժամը 12:00:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ԽԱՌԱՏՅԱՆ ՓԱՇԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՂԱՔՅԱՆ ԱՐՍԵՆ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**